


ՀԱՅՈՎԱՆԻ ԱԽՏՈՐՅԱՆԻ ՎԵՐԱՎՈՐԻ  
ՅՈՒԹՈՒՄՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ФУНДАМЕНТАЛЬНАЯ НАУЧНАЯ БИБЛИОТЕКА

ՍՈՒՐԵՆ ՏԻԳՐԱՆՈՎԻ  
ԵՐԵՄՅԱՆ

СУРЕН ТИГРАНОВИЧ  
ЕРЕМЯН





АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ФУНДАМЕНТАЛЬНАЯ НАУЧНАЯ БИБЛИОТЕКА  
МАТЕРИАЛЫ К БИОБИБЛИОГРАФИИ УЧЕНЫХ  
АРМЯНСКОЙ ССР

№ 33

СУРЕН ТИГРАНОВИЧ  
ЕРЕМЯН

*Вступительная статья Г. Х. САРКИСЯНА и В. Б. БАРХУДАРЯНА  
Библиография составлена Р. А. БАБАДЖАНЯН и  
Ж. О. СОГОМОНЯН*

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН 1984

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ.

ՅՈՒՆԻՑԱՄԵԼՏԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԱՆ

ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ

ԿԵՆՍԱՎԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

№ 33

# ՍՈՒՐԵՆ ՏԻԳՐԱՆԻ ԵՐԵՄՅԱՆ

Ներածականը Գ. Խ. ՍԱՐԴԻՍՅԱՆԻ և Վ. Բ. ԹԱՐԽԵՈՒԴԱՐՅԱՆԻ

Մատենագիտուրյանը կազմել են

Ռ. Ա. ԹԱՐԱԶԱՆՅԱՆԸ և Ժ. Հ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿ ՀՈՒԹՅՈՒՆ  
ՃՐԵՎԱՆ

1984

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ ֆունդամենտալ գիտական  
գրադարանի գիտական խորհրդի որոշմամբ

Խ մ ք ր ա կ ա ն կ ո լ ե զ ի ա

Ա. Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆ (նախագահ), Կ. Ա. ԱԲԳԱՐՅԱՆ,  
Գ. Բ. ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ, Վ. Ս. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Պատասխանառու Խմբագիր՝ Գ. Խ. ՍԱՐԿԻՍՅԱՆ

Печатается по решению ученого совета  
фундаментальной научной библиотеки  
АН Армянской ССР

Редакционная коллегия

С. А. ВАРДАНЯН (председатель), К. А. АБГАՐՅԱՆ,  
Г. Б. ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ, В. С. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ


Ответственный редактор: Г. Х. САՐԿԻՍՅԱՆ


4503010000

Ե —————— 90—84

703 (02) — 84

©Հայկական ՍՍՀ ԳԱ երաժշտական պուրակ, 1984





ՀԱՅՆԱԿԱՆ ՍՈՀ ԳԱ ԱԿԱԴԵՄԻԿԱՆ ԱՈՒՐԵՆ ՏԻԴՐԱՆԻ ԵՐԵՄՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ  
ԽԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐԸ

Սուրեն Տիգրանի Երեմյանը ծնվել է 1908 թ. ապրիլի 10-ին Թբիլիսի-  
սիում:

1928 թ. ավարտել է սուսական միջնակարգ դպրոց Թբիլիսիում:

1931 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆա-  
կուլտետը:

1932—1935 թթ. ՍՍՀՄ ԳԱ անդրկովկառյան մասնաճյուղի կովկասագիտու-  
յան (հետագայում՝ ՍՍՀՄ ԳԱ վրացական մասնաճյուղի լեզվի, պատ-  
մության և նյութական մշակույթի) ինստիտուտի ասլիրանտ:

1935—1938 թթ. ՍՍՀՄ ԳԱ արեելագիտության ինստիտուտի դոկտորանտ:

1936 թ. շնորհվել է պատմական դիտությունների թեկնածուի գիտական  
աստիճան:

1938—1941 թթ. ՍՍՀՄ ԳԱ արեելագիտության ինստիտուտի ավագ գիտական  
աշխատող (լևինգրադ):

1941 թ. ՍՍՀՄ ԳԱ հայկական մատնաճյուղի պատմության և նյութական  
կուլտուրայի ինստիտուտի դիտ. քարտուղար:

1941—1942 թթ. նույն ինստիտուտի դիրեկտորի ժամանակավոր պաշտոնա-  
կատար:

1941—1956 թթ. կարդացել է հայ ժողովրդի պատմության, Հայաստանի  
պատմական աշխարհագրության, ինչպես նաև Վրաստանի և Աղբբեզա-  
նի պատմության դասընթացներ Երևանի պետական համալսարանում,  
Խ. Արովյանի անվ. հայկական մանկավարժական, Վ. Բոյուսովի անվ.  
ուսուական մանկավարժական ինստիտուտներում, Մարքսիզմ-լենինիզմի  
երեկոյան համալսարանում:

1942 թ.—առ այսօր աշխատում է Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության ինս-  
տիտուտում (1942—1945 թթ.՝ ավագ գիտաշխատող, 1945—1964 թթ.  
Հայաստանի հին և միջնադարյան պատմության սեկտորի վարիչ,

- 1964—1971 թթ.՝ միջնադարյան պատմության սեկտորի վարիչ, 1971 թ. առ այսօր՝ հին պատմության սեկտորի, իսկ 1972 թ.՝ բաժնի վարիչ, 1953—1959 թթ.՝ ինստիտուտի դիրեկտոր):
- 1945 թ. ընդունվել է ՍՄԿԿ' անդամ:
- մասնակցել է Հայկական ՍՍՀ հանրապետական դրոշի նախագիծը մշակող հանձնաժողովի աշխատանքին:
- 1947 թ.—առ այսօր՝ Հայկական աշխարհագրական ընկերության նախագահության անդամ և նույն ընկերության պատմական աշխարհագրության սեկտորի վարիչ:
- 1951 թ. պարգևատրվել է «Պատվո Խշան» շքանշանով:
- 1952 թ. խաղաղության կողմինակիցների IV Համամիութենական կոնֆերանսի պատգամավոր Մոսկվայում:
- 1953 թ. Հայաստանի կոմիտափ XVII համագումարի պատգամավոր:
- շնորհվել է պատմական գիտությունների գոկտորի գիտական աստիճան:
- ընտրվել է Հայկական ՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ:
- 1954 թ. մասնակցել է արեելագիտների XXIII միջազգային կոնգրեսին Քիմբրիդժ (Անգլիա):
- 1955 թ. պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:
- շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում:
- ընտրվել է Վրաստանի պատմաբանների, աղջազգագիտների, բանասիրների կամավոր ընկերության անդամ:
- 1960 թ. մասնակցել է արեելագիտների XXV միջազգային կոնգրեսին Մոսկվայում:
- նշանակվել է ՍՍՀՄ բարձրագույն ատեսացիոն հանձնաժողովի էքսպերտ խմբի անդամ:
- 1961 թ. հաստատվել է «ՍՍՀՄ պատմություն՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» ռազմահատորյակի գլխավոր խմբագրության անդամ:
- շնորհվել է Հայկական ՍՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում:
- 1961—1966 թթ. մասնակցել է «Советская историческая энциклопедия»-ի աշխատանքներին:
- 1962 թ.—առ այսօր «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի գլխավոր խմբագրության անդամ:
- 1963 թ. ընտրվել է Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս:

- 1964 թ. մասնակցել է անտիկ աշխարհի պրոբլեմների ուսումնասիրությանը՝ նվիրված միջազգային կոնֆերանսին Անդինգրադում:
- մասնակցել է մարդարանական և աղղագրական գիտությունների միջազգային կոնգրեսին Մոսկվայում:
- 1964—1972 թթ. ՍՍՀՄ աշխարհագրական ընկերության գիտական խորհրդի անդամ:
- 1965 թ. մասնակցել է գիտության և բնագիտության պատմության միջազգային կոնգրեսին (Վարչավա-Կրակով):
- 1965—1968 թթ. Հայկական ՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար և ՀՍՍՀ ԳԱ նախագահության անդամ:
- 1966 թ.—առ այսօր «Вестник древней истории» հանդեսի խմբագրական կոլեգիայի անդամ:
- 1966 թ. մասնակցել է բյուզանդագետների XIII միջազգային կոնգրեսին Օրբիորդում (Անգլիա):
- 1968 թ. պարգևատրվել է Հայկական ՍՍՀ Գերազույն սովորի պատվոզրով՝ ծննդյան 60 և գիտական գործունեության 40-ամյակի կապակցությամբ:
- ընտրվել է «ՍՍՀՄ պատմության ատլաս» (ռուս. լեզվ.) բազմահատորյակի գլխավոր խմբագրության անդամ:
- 1970 թ. մասնակցել է տնտեսագիտության V միջազգային կոնգրեսին Լենինգրադում:
- 1972 թ. ընդունվել է ՍՍՀՄ ԳԱ՝ «Հասարակության պատմական գարգացման և սոցիալ-տնտեսական մի կացութաձևերց մյուսին անցնելու օրինաշափությունները» կոմպլեքսային պրոբլեմի գծով գիտական խորհրդի կազմի մեջ:
- 1973 թ. պարգևատրվել «Большая советская энциклопедия»-ի պատվով:
- պարգևատրվել է Հայկական ՍՍՀ ԳԱ «Գովեռուագրով»:
- 1974 թ.—առ այսօր Հայկական սովորական հանրագիտարանի գլխավոր խմբագրության անդամ:
- 1976 թ. պարգևատրվել է Հայկական ՍՍՀ ԳԱ «Մեծարման գրով»:

- մասնակցել է բյուզանդակետների XV միջաղդային կոնգրեսին  
(Աթենք):
- 1978 թ. պարգևատրվել է Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանով՝  
պատմագիտության ասպարեզում ունեցած վաստակի համար և ծը-  
նընդույան յոթանասունամյակի առթիվ:
- մասնակցել է Հայաստանի և Վրաստանի մշակույթի պատմության  
սիմպոզիումին Խոալիայում (Միլան, Իերգամո, Վենետիկ):
- ընտրվել է Հայաստանի գրքասերների ընկերության նախագահ:
- ընտրվել է Ռուսաստանի Պաղեստինյան ընկերության հայկական  
մասնաճյուղի նախագահ:
- ընտրվել է Հայկական սովետական հանրապետարանի պատմական  
քարտեղագրության գիտաճյուղային խորհրդի նախագահ:
- 1979 թ. մասնակցել է Փրանս-սովետական կոլորվիումին՝ նվիրված Բյու-  
զանդիայի, Հայաստանի և Վրաստանի մշակույթի պատմությանը՝  
Սորբոնի Համալսարանում (Փարիզ):
- 1981 թ. մասնակցել է բյուզանդակետների XVI միջաղդային կոնգրեսին  
Վիեննայում:
- ընտրվել է ՀՍՍՀ ԳԱ նախագահությանն առընթեր քարտեղագրական  
աշխատանքների կոորդինացման գիտական խորհրդի նախագահ:
- 1982 թ. մասնակցել է «Ինկվա» հանձնաժողովի հոլոցենին նվիրված սիմ-  
պոզիումին (Երևան):

ОСНОВНЫЕ ДАТЫ ЖИЗНИ И ДЕЯТЕЛЬНОСТИ  
АКАДЕМИКА АН АРМЯНСКОЙ ССР  
С. Т. ЕРЕМЯНА

Сурен Тигранович Еремян родился 10 апреля 1908 г. в г. Тбилиси.

1928 г. Окончил русскую среднюю школу в г. Тбилиси.

1931 г. Окончил историко-филологический факультет Ереванского гос. университета.

1932—1935 гг. Аспирант Института кавказоведения Закавказского филиала АН СССР (впоследствии—Института языка, истории и материальной культуры Грузинского филиала АН СССР).

1935—1938 гг. Докторант Института востоковедения АН СССР.

1936 г. Присуждена ученая степень кандидата исторических наук.

1938—1941 гг. Старший научный сотрудник Института востоковедения АН СССР. (Ленинград).

1941 г. Ученый секретарь Института истории и материальной культуры Армянского филиала АН СССР.

1941—1942 гг. Временный исполнитель обязанностей директора того же института.

1941—1956 гг. Читал курс истории армянского народа, исторической географии Армении, а также истории Грузии и Азербайджана в Ереванском гос. университете, Армянском педагогическом институте им. Х. Абовяна, Русском педагогическом институте им. В. Брюсова, Вечернем университете марксизма-ленинизма.

1942—н/вр. Работает в Институте истории АН Армянской ССР (в 1942—1945 гг.—старший научный сотрудник, в 1945—1946 гг.—заведующий сектором древней и средневековой истории Арме-

- ии, в 1964—1971 гг.—заведующий сектором средневековой истории, с 1971 по н/вр. заведующий сектором, а с 1972 г.—отделом древней истории, в 1953—1959 гг.—директор института).  
1945 г. Принят в члены КПСС.  
— Участвовал в работе комиссии по разработке проекта республиканского знамени Армянской ССР.  
1947—н/вр. член Президиума Армянского географического общества и заведующий сектором исторической географии того же общества.  
1951 г. Награжден орденом «Знак почета».  
1952 г. Делегат IV Всесоюзной конференции сторонников мира в Москве.  
1953 г. Делегат XVII съезда КП Армении.  
— Присуждена ученая степень доктора исторических наук.  
— Избран членом-корреспондентом АН Армянской ССР.  
1954 г. Участник XXIII Международного конгресса востоковедов в Кембридже (Англия).  
1955 г. Награжден орденом Трудового Красного Знамени.  
— Утвержден в ученом звании профессора.  
— Избран членом Добровольного общества историков, этнографов и фольклористов Грузии.  
1960 г. Участник XXV Международного конгресса востоковедов (Москва).  
— Назначен членом экспертной комиссии (исторические науки) ВАК СССР.  
1961 г. Утвержден членом главной редакции многотомного издания «История СССР с древнейших времен до наших дней».  
— Присвоено звание заслуженного деятеля науки Армянской ССР.  
1961—1966 гг. Принимал участие в работе «Советской исторической энциклопедии».  
1962—н/вр. Член главной редакции многотомного издания «История армянского народа».  
1963 г. Избран академиком АН Армянской ССР.

- 1964 г. Участник Международной конференции по изучению проблем античности в Ленинграде.
- Участник VII Международного конгресса антропологических и этнографических наук в Москве.
- 1964—1972 гг. Член ученого совета Географического общества СССР.
- 1965 г. Участник XI Международного конгресса по истории науки и естествознания (Варшава—Краков).
- 1965—1968 гг. Академик-секретарь Отделения общественных наук и член Президиума АН Армянской ССР.
- 1966 г. Участник XIII Международного конгресса византиноведов в Оксфорде (Англия).
- 1966—н/вр. Член редколлегии журнала «Вестник древней истории».
- 1968 г. Награжден Почетной грамотой Верховного Совета Армянской ССР в связи с 60-летием со дня рождения и 40-летием научной деятельности.
- Избран членом главной редакции многотомного «Атласа истории СССР».
- 1970 г. Участник V Международного конгресса экономической истории в Ленинграде.
- 1972 г. Введен в состав Научного совета АН СССР по комплексной проблеме «Закономерности исторического развития общества и перехода от одной социально-экономической формации к другой».
- 1973 г. Награжден «Почетной грамотой БСЭ» в связи с 50-летием со дня основания издательства «Советская энциклопедия».
- Награжден грамотой АН Армянской ССР «Говестагир».
- 1974 г.—н/вр. Член главной редакции Армянской советской энциклопедии.
- 1976 г. Награжден грамотой АН Армянской ССР «Мецарман гир».
- Участник XV Международного конгресса византиноведов (Афины).

1978 г. Награжден орденом Октябрьской революции за заслуги в области исторической науки и в связи с 70-летием со дня рождения.

- Участник симпозиума по истории культуры Армении и Грузии в Италии (Милан, Бергамо, Венеция).
- Избран председателем Общества книголюбов Армении.
- Избран председателем Армянского филиала Российского Палестинского Общества.
- Избран председателем научно-отраслевого совета по исторической картографии Армянской советской энциклопедии.

1979 г. Участник франко-советского коллоквиума по истории культуры Византии, Армении и Грузии в университете Сорбонны (Париж).

1981 г. Участник XVI Международного конгресса византиноведов в Вене.

- Избран председателем Научного совета по координации картографических работ при Президиуме АН Армянской ССР.

1982 г. Участник симпозиума комиссии ИНКВА по голоцену в Ереване.

ԿՅԱՆՔԻ, ԳԻՏԱԿԱՆ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ,  
ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԵՎ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Հայկական ՍՍՀ դիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, պատմական գիտությունների գոկտոր, պրոֆեսոր Սուրեն Տիգրանի Երեմյանը ծնվել է 1908 թ. ապրիլի 10-ին Թբիլիսիում, բանվորի ընտանիքում։ Տակավին տեղի ոռւսական դպրոցի վերջին դասարաններում դրսմորվեցին պատանի Երեմյանի պատմության և աշխարհագրության նկատմամբ ունեցած հակումները։

1928 թ. Ս. Երեմյանը ընդունվում է Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետը։ Ուսանողական տարիներին ակադեմիկոս Հ. Մանանդյանի ղեկավարությամբ նա գրում է առաջին դիտական աշխատանքը՝ Անդրկովկասի առևտրական ուղիների մասին IV դարում՝ ըստ Հռոմեական ճանապարհացուցք «Պեվտինգերյան քարտեզի»։ 1931 թ. նա մասնակցում է հին Վաղարշապատի պեղումներին։

Համալսարանն ավարտելուց հետո Ս. Երեմյանը 1932 թ. ընդունվում է ՍՍՀՄ ԳԱ անդրկովկասյան մասնաճյուղի կովկասագիտական ինստիտուտի ասպիրանտուրան։ Գիտական ղեկավար է նշանակվում ակադեմիկոս Ն. Մառը։ 1935 թ. Երիտասարդ մասնագետի կյանքում նոր շրջան է սկսվում։ Կովկասագիտության ինստիտուտի դիտաշխատող Ս. Երեմյանը դորժուղվում է Լենինգրադ, սովետական պատմական գիտու-

թյան խոշորագույն կենտրոններից մեկը՝ ՍՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտ։ Այստեղ, նույն տարում, նա հաջողությամբ պաշտպանում է «Քարթլիի (Արևելյան Վրաստանի) քեռդալական կազմավորումները մարզպանական շրջանում» թեմայով դիսերտացիան և ստանում պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանն Նրան հանձնարարվում է «ՍՍՀՄ պատմություն» բազմահատորյակի համար գրել Հայաստանի և Աղվանքի ամբողջական պատմության բաժինը՝ հնագույն շրջանից մինչև XI դարը։ Դա երիտասարդ գիտաշխատողին վստահված պատասխանատու և միաժամանակ իսկամ դժվարին գործ էր, քանի որ հրապարակի վրա դեռևս չկար Հայաստանի և Աղվանքի հին և միջնադարյան պատմության սիստեմատիկ մարքսիստական շարադրանքի որևէ փորձ։ Ս. Երեմյանը հաջողությամբ իրականացնում է գիտական հանձնարարությունը, դրան կից ներկայացնելով նաև Հայաստանի և Կովկասի պատմական քարտեղները։

Ս. Երեմյանի մանկավարժական գործունեության սկզբնավորումը ևս կապվում է Լենինգրադի հետ։ 1935 թ. սկսած նա հայ ժողովրդի պատմություն է ավանդում Լենինգրադի պետական համալսարանի պատմության և բանասիրության ֆակուլտետներում։

ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի հրավերով 1941 թ. մարտին Ս. Երեմյանը Լենինգրադից տեղափոխվում է Երևան և իր կյանքն առմիջապես կապում Հայաստանի գիտությունների ակադեմիայի, նրա պատմության ինստիտուտի հետ։ 1945 թվականին, երբ ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում կազմակերպվում են առանձին բաժիններ, նա դառնում է հին և միջին դարերի (1964 թվակա-

նից՝ միջին դարերի, իսկ 1971 թվականից՝ հին դարերի) պատմության բաժնի վարիչը:

Ս. Երեմյանը 1953 թ. Մոսկվայում պաշտպանում է գոկտորական դիսերտացիա՝ «Հին Հայաստանի ստրկատիրական հասարակարգը» թեմայով։ Նույն տարում նա ընտրվում է ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ և նշանակվում Պատմության ինստիտուտի դիրեկտոր (1953—1959 թթ.): 1963 թ. Ս. Երեմյանը ընտրվում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, 1965—1968 թթ. վարում ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուզարի պաշտոնը։ Խորապես գիտակցելով հին և ժամանակակից արենլյան ու եվրոպական լեզուների նշանակությունը հայագիտության և, մասնավորապես, հայոց պատմության ուսումնասիրության համար, նա գիտակադմակերպական պաշտոններ վարելիս, և առհասարակ, մեծ ջանքեր է թափում այդ լեզուներին տիրապետող երիտասարդ մասնագետներ պատրաստելու ուղղությամբ։ Այժմ հունարեն, ասորերեն, արաբերեն, պարսկերեն, թուրքերեն և այլ լեզուներին հիմնավորապես տիրապետող և սովետահայ պատմագրության մեջ առաջատար դեր կատարող մասնագետների մեծ մասը Ս. Երեմյանի հետեւղղական աշխատանքի շնորհիվ պատրաստված կադրերն են։

Հայաստան տեղափոխվելուց հետո էլ Ս. Երեմյանը շարունակեց մանկավարժական աշխատանքը։ Նա հայ և վրաց ժողովուրդների պատմություն և պատմական աշխարհագրություն էր դասավանդում Երևանի պետական համալսարանի, և Արքվայնի անվան հայկական մանկավարժական, Վ. Բրյուսովի անվան ուսուական մանկավարժական ինստիտուտների տարրեր ֆակուլտետներում, Մարգսիզմ-լենինիզմի երեկոյան համալսարանում։ Խոշոր են Ա. Երեմյանի ժառա-

յությունները հատկապես երիտասարդ գիտական կադրեր պատրաստելու գործում։ Բավական է նշել, որ նա զեկավարել և աճեցրել է երկու տասնյակից ավելի ասպիրանտներ ու նույնքան էլ դիսերտանտներ։

Ս. Երեմյանը ակտիվորեն մասնակցում է հանրապետության հասարակական-քաղաքական կյանքին։ Նա որպես պատգամավոր մասնակցել է Հայաստանի կոմունիստական կուսակցության XVII համագումարի աշխատանքներին։ Որպես տերմինաբանական կոմիտեի, բազմաթիվ գիտական խորհուրդների անդամ, Հայաստանի դրասերների ընկերության նախագահ, Ռուսաստանի Պաղեստինյան ընկերության հայկական մասնաճյուղի նախագահ, իր գործուն մասնակցությունն է բերում հանրապետության հասարակական և մտավոր կյանքին։

Կուսակցությունը և կառավարությունը բարձր են գնահատել։ Ս. Երեմյանի ծառայությունները։ Պատմական գիտության ասպարեզում բեղմնավոր գործունեության համար նա պարգևատրվել է Հոկտեմբերյան հեղափոխության, Աշխատանքային կարմիր դրոշի, «Պատվո նշան» շքանշաններով և մի շարք մեդալներով։

Հայագիտական փայլուն կրթությունը, հին ու նոր վրացերներնի հիմնավոր իմացությունը, կովկասագիտական խոր գիտելիքներն այն ամուր հիմքը հանդիսացան, որը հնարավորություն տվեց Ս. Երեմյանին ծանրակշիռ ներդրում կատարել սովետահայ պատմագրության, հին ու միջին դարերի պատմության պրոբլեմների գիտական մշակման գործում։

Լայն և ընդգրկուն են Ս. Երեմյանի գիտական հետաքրքրությունների շրջանակները։ Նրան հավասարապես զբաղեցնում են հայ ժողովրդի կազմավորումից մինչև ուշ

միջնադար հասնող ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմության, հայ-վրացական, հայ-բյուզանդական հարաբերությունների, կովկասագիտության, Հայաստանի և Կովկասի պատմական աշխարհագրության ու քարտեզագրության խնդիրները:

Իր գիտական գործունեության ընթացքում Ս. Երեմյանը ավելի քան երեք տասնամյակ հետազոտում և իր հետաքրքրությունների կենտրոնում է պահում հայ ժողովրդի ծագման ու կազմավորման բարդ խնդիրը։ Հենվելով հայագիտության նվաճումների վրա, նա գիտականորեն հիմնավորված տեսակետ դարձացրեց հայ ժողովրդի կազմի մեջ որպես նրա քաղադրիչ՝ մասեր մտած գլխավոր էթնիկական՝ տեղական ու եկվոր տարրերի, աշխարհագրական տարրածվածության և միավորման վերաբերյալ։ Նա առաջ քաշեց և հիմնավորեց այդ պրոցեսի շորս փուլերի տեսությունը, փուլեր, որոնք հետևողականորեն կապվում էին Հայկական լեռնաշխարհի շորս շրջանների՝ Հայաստանի, Արմե-Շուապրիսյի, Վանա լճի ավազանի և, վերջապես, Արարատյան դաշտի հետ։ Ս. Երեմյանի հետազոտությունները գալիս են ճշտելու և ըստ ամենայնի արժեքավորելու այն ցեղերի ու ցեղային միությունների տեղն ու գերը, որոնց միավորումը հանգեցրեց Հայկական լեռնաշխարհում առաջին ժողովրդի՝ հայ ժողովրդի առաջացմանը։ Նա ապացուցեց, որ հայերը Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկ (ավտոխոտոն) ժողովուրդ են։

Ս. Երեմյանի վաստակը մեծ է նաև հին Հայաստանի հասարակական կարգի, նրա բնույթը հետազոտելու ասպարեզում։ Տակավին 1930-ական թթ. վերջերին Ս. Երեմյանը, հենվելով հայ պատմագրության նվաճումների՝ կայդ շրջանում հին

արևելյան հասարակությունների ստրկատիրական բնույթի  
մասին սովետական պատմագրության մեջ տիրապետող դար-  
ձած տեսության վրա, նոր տեսակետ մշակեց հին Հայաստանի  
հասարակարգի մասին: Նա նախաֆեռդալական Հայաստանի  
գյուղատնտեսության, արհեստաների, առևտրի, առևտրական  
ուղիների և այլ հարցերի համակողմանի լուսարանման հիման  
վրա ներկայացրեց հին Հայաստանի տնտեսության ամբողջա-  
կան պատկերը: Ս. Երեմյանը բացահայտեց մասնավորապես  
արևելյան ստրկատիրական հասարակարգերին հատուկ և  
նախաֆեռդալական Հայաստանում մեծ կշիռ ունեցած գյուղա-  
կան համայնքի էտիլյունը, ցույց տվեց, որ Հայաստանում բա-  
վական լայն տարածում գտած դաստակերտներն ու ազա-  
րակները սեփականատիրական տնտեսություններ են եղել, ուր  
լայնորեն կիրառվել է ստրուկի աշխատանքը: Նա ըստ ամե-  
նայնի անդրադարձավ Հայաստանի պետական կառուցվածքի  
հարցերին. այստեղ նույնպես արտահայտվել է հին Հայաս-  
տանի ստրկատիրական բնույթը: Հատկապես «Հին Հայաս-  
տանի ստրկատիրական հասարակարգ» դոկտորական դի-  
սերտացիայում և մյուս աշխատություններում Ս. Երեմյանն  
ավելի խորացրեց ու հիմնավորեց իր նոր տեսությունը: Դրա-  
նով նա որոշակի ու հիմնավոր կերպով սահմանազատեց հին  
Հայաստանի հասարակարգը միջնադարյան, ֆեոդալական  
հասարակարգից:

Այսպիսով, սովետական պատմագրության մեջ առաջին  
անգամ ակադեմիկոս Ս. Երեմյանը խիզախեց դուրս գալ նախ-  
նադարյան համայնական կարգերից ուղղակի ֆեոդալական հա-  
սարակարգին անցնելու հայ պատմագրության մեջ արմատա-  
ցած ուղղուց և հին արևելյան ու հելլենիստական երկրների պատ-

մության ընդհանուր հետնախորքի վրա գիտականորեն հիմնավորեց Հին Հայաստանի հասարակարգի ստրկատիրական բնույթը:

Այս սկզբունքորեն կարևոր պրոբլեմի բնական շարունակությունը հանդիսացան Հայաստանում ֆեռուալիզմի ծաղման խնդրին նվիրված Ս. Երեմյանի ուսումնասիրությունները: Հայ պատմագրության մեջ ֆեռուալական հարաբերությունների ձևավորման հարցը տևականորեն հարուցել է տարակարծություններու ու վեճերու Ակադեմիկոս Ս. Երեմյանը ֆեռուալիզմի առաջացնելու կապեց ստրկատիրական հասարակարգի ճգնաժամի հետ և ցույց տվեց, որ մեր թվականության III-IV դարներու մեջ ֆեռուալական արտադրաեղանակը վերջնական հաղթանակ էր տարել: Նա շեշտում է նաև այն հանգամանքը, որ ստրկատիրության ընդերքում, մ.թ. առաջին դարերից սկսած, հայ հասարակության զարգացումն ընթացել է ֆեռուալական տարրերի աստիճանական հանդես գալով և աճով: Խոսելով երկրի ֆեռուալականացման պրոցեսի մասին, նա միաժամանակ նշում է, որ Հայաստանի ծայրամասային նահանգներում, որտեղ ստրկությունը թույլ էր արտահայտված, նախնադարյան-համայնական հասարակարգը և շահագործման նահապետական ձևերն ուղղակիորեն փոխարինվում են վաղ ֆեռուալական ձևերով: «Հասարակության զարգացումը, գրում է Ս. Երեմյանը, — այստեղ ընթացել է ուղիղ ճանապարհով՝ նախնախարյան համայնական հասարակության դեպքի ֆեռուալիզմը»:

Հայ ժողովրդի միջնադարյան շրջանի կարևոր, առանցքային պրոբլեմներից է ֆեռուալիզմի դարաշրջանի պատմության պարբերացումը:

Հայ բուրժուական պատմագրությունը ֆեոդալիզմը դիտել է ոչ թե որպես արտադրության որոշակի եղանակ, այլ քաղաքական-իրավական կազմակերպության որոշակի ձև։ Մեթոդոլոգիական նման սխալ դիրքերից մոտենալով, բնականաբար, նրան չի հաջողվել նաև գիտական մեկնություն տալ սույն պրոբլեմին։

1940-ական թթ. սովետահայ պատմագրության մեջ ակտիվ բանավեճ սկսվեց Հայաստանի ֆեոդալիզմի դարաշրջանի պատմության պարբերացման հարցի շուրջը։ Հանրապետական և միութենական գիտական ամսագրերում տպագրվեցին իրառամերժ բազմաթիվ հոդվածներ։ Ս. Երեմյանը 1951 թ. «Вопросы истории» կենտրոնական ամսագրում հրատարակեց «Հայաստանի ֆեոդալիզմի դարաշրջանի պատմության պարբերացման փորձ» համեստ խորագիրը կրող հոդվածը։ Դա հեղինակի երկարամյա աշխատանքի արդյունքների հանրագումարն էր՝ շարադրված ամփոփ և ընդհանրացված ձևով։ Գիտական լուրջ հետաքրքրություն ներկայացնող այս հոդվածում Հայաստանում ֆեոդալական հասարակարգի սկզբնավորումը դիտվում է III—IV դարերից և հասցվում է մինչև XIX դարը։ Ս. Երեմյանի մշակած պարբերացման համաձայն Հայաստանում ևս ֆեոդալական հասարակությունը անցել է երեք հիմնական պատմափուլ՝ վաղ ֆեոդալիզմը, որն ընդգրկում է IV—IX դդ., զարգացած ֆեոդալիզմը՝ IX—XIV դդ. և ֆեոդալիզմի վայրէշի կամ, հեղինակի խոսքով ասած, ֆեոդալիզմի քայլայման ժամանակաշրջանը՝ XIV—XVIII դդ.: Հեղինակը միշնադարյան Հայաստանի ֆեոդալիզմի ընդհանուր պատմությանը հատուկ երեք հիմնական դարաշրջաններն իրենց հերթին բաժանում է

առանձին ենթափուկերի և տալիս դրանց բնորոշ կողմերն ու  
առանձնահատկությունները։ Այսպես օրինակ, Հայաստանում  
ֆեոդալիզմի վայրէջքի ու անկման պրոցեսը նա իրավամբ  
պայմանավորում է արտաքին ուժերի տիրապետության հե-  
տևանքով կատարվող այն տեղաշարժերով, երբ զարգացած  
ֆեոդալական հարաբերությունները փոխարինվում են քոչվո-  
րական կիսանահապետական ֆեոդալական հարաբերություննե-  
րով։ Ֆեոդալիզմի դարաշրջանի պատմության պարբերացման  
Ս. Երեմյանի մշակած ուրվագիծն ընդունվեց ու ճանաշում  
գտավ։ Ավելին, միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսա-  
կան ու քաղաքական պատմության առանձին հարցերի հետագա  
մասնագիտական ուսումնասիրությունները ոչ միայն պահանջ  
շղրեցին վերանայելու, այլ ընդհակառակը, միայն հավաստեցին  
այդ պարբերացումը։ Կարեոր այդ հանգամանքը վկայում է  
ֆեոդալիզմի դարաշրջանի ամրողական պատմության Ս. Ե-  
րեմյանի խոր ու համակողմանի ընկալման և միջնադարյան  
Հայաստանի ու հարեւան երկրների պատմական զարգացման  
ներքին օրինաշափությունների բացահայտման նրա անուրա-  
նալի վաստակի մասին։

Ակադեմիկոս Ս. Երեմյանի գիտական ստեղծագործության  
մեջ էական տեղ է գրավում նաև հին և միջնադարյան Հայաս-  
տանի քաղաքական պատմությունը։ Հայաստանի և Անդրկով-  
կասի պատմության ընդհանուր շարադրանքի ընթացքում,  
ինչպես նաև առանձին հոդվածներում, քաղաքական պատմու-  
թյան մեջ ու փոքր բազմաթիվ հարցեր են դրվել ու լուծվել։  
Դրանք հիմք են հանդիսացել և դուռ բացել նոր հետազոտու-  
թյունների համար, խթանել պատմագիտական միտքը։ Նա

գիտական պատշաճ մակարդակով բացահայտել է վաղ Հայկական շրջանի մ. թ. ա. VI դ. — մ. թ. առաջին դարերի պատմության, ինչպես և V—VI դարերում պարսկական տիրապետության տակ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի հարցերը, հայկական պետականության վերականգնման, թագրատոմնյաց ժամանակաշրջանի քաղաքական և մշակութային պատմության բազում էջեր:

Ս. Երեմյանի պատմագիտական հետազոտությունների, հատկանշական կողմը համաշխարհային պատմական պրոցեսի ըմբռնումն է: Այս առումով նա ն. Ադոնցի և Հ. Մանանդյանի գործի և ավանդների արժանավոր հետևորդն է:

Ճանաչված պատմաբանն է գիտական վաստակի մի դպալի մասը դուրս է գալիս հայագիտության ոլորտից: Վրացերենի և Վրաստանի պատմության հիմնավոր իմացությունը հնարավորություն են ընձեռել անդրադառնալու վրացագիտության ու կովկասագիտության պրոբլեմներին: Ս. Երեմյանի հատկապես միջնադարի պատմությանը վերաբերող շատ աշխատություններում հանգամանալից քննվում են հայ և վրաց ժողովուրդների տնտեսական և մասնվորապես քաղաքական կապերն ու փոխազդեցությունները, իսկ որոշակի դարաշրջաններում՝ նրանց պատմական ճակատագրի ընդհանրությունը: Առանձնապես լավ է լուսաբանված հայ-վրացական համատեղ պայքարը՝ Հայաստանը սելջուկ-թուրքերի տիրապետությունից ազատագրելու գործում: Զաքարյանների մասին գիտական հետազոտություններում («Յուրի Բոգոլյուբսկին ըստ հայկական և վրացական աղբյուրների», «Լիպարիտ զորավարի հաջորդները և Դանիշմանյան տառմի ծագման խնդիրը») և ուրիշ աշխատություններում բա-

ցահայտվում են Հայ-վրաց-ռուսական, Հայ-վրաց-բլուզանդական և այլ փոխհարաբերությունների բազմաթիվ հարցեր: Եթե դրանց ավելացնենք Հյուսիսային Կովկասի և Աղվանքի պատմությանը նվիրված աշխատությունները, ապա պատկառելի է դառնում Ս. Երեմյանի կովկասագիտական վաստակը, և նա իրավամբ կանգնում է մեր ժամանակի խոշորագույն կովկասագետների կողքին: Հայաստանի և Կովկասի պատմաշխարհագրական և քարտեզագրական ուսումնասիրությունների մեջ, որտեղ նա հանդիսանում է եղակի մասնագետ, առավել մեծ շափով է փայլատակում Երեմյան-Հետազոտողի տաղանդը: Գիտության այս ճյուղին նա չի մոտենում որպես ինքնարավ մի մասնագիտության, այլ իբրև մի բանալու՝ բացահայտելու պատմագիտական կարևոր երեսությներ:

Ս. Երեմյանի կաղմած առաջին քարտեզները հրատարակվել են գեռես 1931 թվականին, իսկ 1948-ին նրանք տեղ գտան ՍՍՀՄ պատմության միջնակարգ դպրոցների ձեռնարկում: 1952 թ. «Հայ ժողովրդի պատմություն» դպրոցական դասագրքի հետ հրատարակվեց 7 քարտեզից բաղկացած ատլասը: Ապա տարբեր հրատարակություններում, այդ թվում և Հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի տարբեր հատորներում, հրատարակվեցին բազմաթիվ քարտեզներ, որոնց ընդհանուր քանակը հասնում է ութ տասնյակի: Նրանցում ցույց է տրված Հայ ժողովրդի, նրա պետական կազմավորումների գարգացման, տարածքային ու էթնիկական տեղաշարժերի ամեն մի փուլը՝ հնագույն ժամանակներից մինչև նոր շրջանը:

Ս. Երեմյանի պատմական աշխարհագրությանը նվիրված աշխատանքների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում VII դարի «Աշխարհացույցի» հետազոտությունը, որում կարծես

թե բևեռանում են գիտության այս ճյուղում ունեցած նրա բացառիկ գիտելիքները։ Հայ միջնադարյան գիտական մտքի մեծարժեք այդ հուշարձանը՝ VII դ. «Աշխարհացույցը» իր նշանակությամբ դուրս է գալիս հայ իրականության շրջանակներից։ Ինչպես ցուցվէ տավել U. Երեմյանը, Եվրոպայում գիտության անկման շրջանում հայկական այդ հուշարձանը պահպանել է անտիկ շրջանի աշխարհագրության լավագույն ավանդները։

Բազմավաստակ գիտնականին հաջողվեց բացահայտել կարևոր այն իրողությունը, որ «Աշխարհացույցը» տարբեր երկրների աշխարհագրական նկարագրության կամ աշխարհագրության ձեռնարկ չէ, ինչպես կարծել են ավանդաբար, այլ չպահպանված քարտեզների մի ամբողջ մատենաշարի՝ աշխարհի ատլասի բացատրագիր, որը այդպես էլ կոչվել է «Աշխարհացույց»։ Բացատրական այդ բնագրի միջոցով էլ U. Երեմյանը վերականգնում է անդարձ կորած քարտեզների ժողովածուն՝ ատլասը «Աշխարհացույց» անունով, ինչպես նաև VII դարի հայկական գլոբուարը 1963 թ. լույս տեսած «Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի աշխատությունը դարձալ ոչ միայն պատմաբանների և աշխարհագրագետների, այլև ազգագրագետների, լեզվաբանների, կենդանաբանների, բուսաբանների սեղանի գիրքը։

Եթե U. Երեմյանը պատմության և բանասիրության ասպարեզում ունեցել է այնպիսի անվանի ուսուցիչներ, ինչպիսիք են Հ. Մանանդյանը, Ն. Մառը, Վ. Մտրութեն, Հ. Օրբելին, Ի. Զավախիշվիլին և ուրիշները, ապա պատմական աշխարհագրության ասպարեզում ինքն է առաջինը ուղի հարթել և մեզանում դարձել գիտության այդ ճյուղի հիմնադիրը։ U. Երեմյանը մշակել է գիտական հետազոտության պատմաքարտեզագրա-

կան մեթողը, որը լայն ճանաշում է գտել սովետական պատմագրության մեջ։ Նա մեզանում ստեղծել է պատմական աշխարհագրության և քարտեզագրության գիտական դպրոց և մեծ հաջողությամբ գլխավորում է այն։ Սովետական Միության և արևասահմանյան հրատարակություններում տպագրված Ս. Երեմյանի քարտեզներն ընդհանուր ճանաշում են գտել և սովետահայ պատմական աշխարհագրությունն ու քարտեզագրությունը բարձրացրել համաշխարհային առաջավոր գիտության մակարդակի։

Վերը հիշատակված պրոբլեմներից զատ՝ Ս. Երեմյանը իր աշխատություններում արծարծել և հետազոտել է մեծ ու փոքր րազմաթիվ ու տարածնույթ այլ հարցեր, որոնք պատմագիտական որոշակի արժեք ունեն։ Խնչպիսի խնդիրների էլ նվիրված լինեն և որքան ծավալ էլ ունենան, միևնույն է։ Ս. Երեմյանի ուսումնասիրությունները աշքի են ընկնում փաստական նյութի բազմազանությամբ և մշտապես պարունակում են նոր ու թարմ մասքեր ու կուանումներ։ Առավել ուսանելին, սակայն, այն է, որ նա պատմական երևույթները դիտում է ոչ թե անփոփոխ, քարացած վիճակում, այլ իրենց զարգացման մեջ և մշտապես հետամուտ է նրանց կրած փոփոխությունները, նրանց ապրած էվոլյուցիան բացահայտելուն։

Երեմյան-գիտնականին բնորոշ է գիտության առաջընթացի ու մասնագիտացման մերժամանակներում խիստ արժեքավոր մի հատկանիշ։ Իրեն հետաքրքրող գիտական պրոբլեմները լուծելու համար նա հմտորեն հենվում և լայնորեն օգտագործում է պատմության օժանդակ գիտությունները, այս կամ այն իրողությունը բացահայտելու դրանց յուրաքանչակ հնարավորությունները, պարունակած նյութը։ Ամենափին էլ պատահական չէ,

իր Ս. Երեմյանի հեղինակությամբ, խմբագրությամբ, առաջարանով կամ կարծիքներով ու կոնսուլտացիաներով հրապարակվել են Հնագիտության, ազգագրության, վիմագրության, դրամագիտության, բանագիտության, ինչպես նաև Հայկական մշակույթի այլ մարզերին վերաբերող բազմաթիվ աշխատություններ։

Ակադեմիկոս Ս. Երեմյանի ուսումնասիրությունների գերակշռող մասը հրատարակվել է Կոլեկտիվ, ընդհանրացնող աշխատություններում։ ՍՍՀՄ ժողովուրդների պատմության բազմահատորյակներում նա հանդես է եկել ոչ միայն որպես հին և միջնադարյան Հայաստանի, այլև Հարեան ժողովուրդների պատմության հեղինակ։ Սովետահայ պատմագիտության նվաճումներն ընդհանրացնող ռՀայ ժողովրդի պատմության ակադեմիական հրատարակության ութհատորյակի առաջին և երկրորդ հատորների պատասխանատու խմբագիրը և հիմնական հեղինակներից է Ս. Երեմյանը։ Նա գործուն մասնակցություն է ունենում սովետական հանրագիտարանների և հատկապես ռՀայկական սովետական հանրագիտարաններից աշխատանքներին։ Նա հայ ժողովրդի ամբողջական պատմության մարքսիստական առաջին աշխատության՝ միջնակարգ դպրոցի ձեռնարկի ստեղծողներից ու գլխավոր հեղինակներից է։

Ս. Երեմյանը ակտիվ մասնակցություն է բերում հայագիտական, բյուզանդագիտական, կովկասագիտական և արևելագիտական համամիութենական ու միջազգային շատ գիտագործուների, ուր պատվով է ներկայացնում հայրենական պատմական գիտությունը։

Ամբողջովին գիտությանը նվիրվելը, իր հետաքրքրությունները, իր կյանքը միայն և միայն գիտության մեջ տեսնելու նրա վարքագիծը դաստիարակիլ օրինակ է հանդիսանում գիտու-

թյան դռները բախող երիտասարդության և իր կրտսեր գրչակիցների համար՝ Գիտության էնտուզիաստի այդ խառնվածքը ղուզակցվում է նրա անձնական հատկանիշներին՝ արտակարդ համեստությանը, բարյացակամությանը, շրջապատին օգնելու մշտական պատրաստակամությանը, երիտասարդ կադրերի նկատմամբ հոգատարությանը։

Սովետական նշանավոր պատմաբան Ա. Տ. Երեմյանի ավելի քան կեսդարյա գիտական ընդգրկում ու բեղուն գործունեությունը և նրա անձնական հատկանիշները դահնում են այն խոր հարգանքի հիմքը, որ նրա նկատմամբ տաժում է մեր մտավորականությունը և ողջ հասարակայնությունը։

ՀՍԱՀ ԳԱ. քզքակից-անդամ  
Պատմական գիտ. դրկտոր

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ  
Ա. ԲԱՐԽՈՒԴԻԴԱՐՅԱՆ

## КРАТКИЙ ОЧЕРК ЖИЗНИ, НАУЧНОЙ, ПЕДАГОГИЧЕСКОЙ, НАУЧНО-ОРГАНИЗАЦИОН- НОЙ И ОБЩЕСТВЕННОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

Академик Академии наук Армянской ССР, заслуженный деятель науки, доктор исторических наук, профессор Сурен Тигранович Еремян родился 10 апреля 1908 г. в Тбилиси, в семье рабочего. Уже в последних классах местной русской школы у юного Еремяна проявились наклонности к истории и географии.

В 1928 г. С. Т. Еремян поступает на историко-филологический факультет Ереванского гос. университета. В студенческие годы под руководством академика Я. А. Манандяна он пишет свою первую научную работу о торговых путях Закавказья в IV веке по «Пейтингеровой таблище»—древнеримского дорожника-карты. В 1931 г. С. Еремян участвует в раскопках древнего Вагаршапата.

После окончания университета С. Т. Еремян поступает в аспирантуру Института кавказоведения Закавказского филиала АН СССР. Руководителем был назначен академик Н. Я. Марр.

В 1935 г. в жизни молодого ученого наступает новый период. Научный сотрудник Института кавказоведения С. Т. Еремян командируется в Ленинград—один

из крупнейших центров советской исторической науки, в Институт востоковедения АН СССР. Здесь, в том же году, он с успехом защищает диссертацию на тему «Феодальные образования Картли (Восточной Грузии) в период марзпанства», и ему присуждается ученая степень кандидата исторических наук. Еремяну поручают написать раздел по истории Армении и Кавказской Албании с древнейших времен до XI века для многотомника «История СССР». Молодому ученыму было доверено ответственное и чрезвычайно трудное дело, поскольку опыта систематического марксистского изложения древней и средневековой истории Армении и Кавказской Албании еще не было. С. Т. Еремян успешно выполнил научное задание, представив, к тому же, исторические карты Армении и Кавказа.

Начало педагогической деятельности С. Т. Еремяна также связано с Ленинградом. С 1935 г. он преподавал историю армянского народа на историческом и филологическом факультетах Ленинградского гос. университета.

По приглашению армянского филиала АН СССР (Армфар) в марте 1941 г. С. Т. Еремян переезжает из Ленинграда в Ереван и навсегда связывает свою жизнь с Институтом истории АН Армянской ССР. В 1945—1964 гг. он руководил Отделом древней и средневековой истории, затем—средневековой истории, а с 1971 г. по настоящее время заведует Отделом древней истории.

В 1953 году С. Т. Еремян защищает в Москве докторскую диссертацию на тему «Рабовладельческое об-

щество древней Армении». В том же году он избирается членом-корреспондентом АН Армянской ССР и назначается директором Института истории (1953—1959 гг.). В 1963 г. С. Т. Еремян избирается академиком Академии наук Армянской ССР. В 1965—1968 гг. занимает должность академика-секретаря отделения общественных наук АН Армянской ССР.

Глубоко сознавая значение древних и современных восточных и европейских языков для развития арmeno-ведения и, в частности, для изучения истории армянского народа, Еремян приложил много труда, чтобы создать условия для подготовки молодых специалистов, владеющих этими языками.

В настоящее время большая часть специалистов, выполняющих заметную роль в советской армянской историографии и основательно владеющих греческим, сирийским, арабским, персидским, турецким и другими языками, являются кадрами, подготовленными благодаря последовательным усилиям С. Т. Еремяна.

После переезда в Армению С. Т. Еремян продолжил педагогическую деятельность и здесь. Он читал курс истории и исторической географии Армении, Грузии и Кавказской Албании на разных факультетах Ереванского гос. университета, Армянского педагогического института им. Х. Абояна, Русского педагогического института им. В. Брюсова, в вечернем университете марксизма-ленинизма.

Велики заслуги С. Т. Еремяна особенно в деле подготовки молодых научных кадров. Достаточно отметить,

что он руководил работой более чем двух десятков аспирантов и стольких же докторантов.

С. Т. Еремян принимает активное участие в общественно-политической жизни республики. В качестве делегата он участвовал в работе XVII съезда КП Армении. Он является членом терминологического комитета, многих научных советов, председателем общества книголюбов Армении и председателем армянского филиала Российской Палестинского общества.

Партия и правительство высоко оценили заслуги С. Т. Еремяна. За плодотворную работу в области исторической науки и подготовку молодых кадров он был награжден орденами Октябрьской Революции, Трудового Красного Знамени, «Знак Почета» и медалями.

Блестящее арменоведческое образование, основательное знание древнего и современного грузинского языка, глубокие знания по кавказоведению явились той прочной основой, которая дала возможность С. Т. Еремяну внести весомый вклад в советскую армянскую историографию, в дело научной разработки проблем древней и средневековой истории.

Круг научных интересов С. Т. Еремяна чрезвычайно широк и многосторонен. Его одинаково занимают вопросы социально-экономической и политической истории армянского народа со времен его формирования до позднего средневековья, проблемы армяно-грузинских, армяно-византийских, армяно-русских отношений, кавказоведения, исторической географии и картографии Армении и Кавказа.

С. Т. Еремян в ряде своих исследований выработал концепцию этногенеза армян. Более трех десятилетий он продолжает изучать вопрос возникновения и формирования армянского народа, привлекая материал из различных научных дисциплин. Опираясь на достижения арменоведения, он развел научно обоснованную точку зрения относительно вошедших в состав армянского народа основных местных и пришлых этнических элементов, их географического распространения и консолидации в единую народность. С. Т. Еремян выдвинул и обосновал теорию о последовательной концентрации процессов этногенеза армян вокруг четырех очагов Армянского нагорья—Хайасы, Арме-Шуприа, бассейна Ванского озера и Ааратской долины. Исследования С. Т. Еремяна уточняют место и роль тех племен и племенных союзов, объединение которых привело к образованию на Армянском нагорье первого на этой территории подлинного, исторически устойчивого народа—армянского народа. Он доказал, что армяне—автохтонный народ Армянского нагорья.

Велика заслуга С. Еремяна также в области изучения общественного строя древней Армении. Еще в конце 1930-х годов, основываясь на достижениях армянской историографии и на сложившейся в тот период в советской историографии теории о рабовладельческом характере древневосточных обществ, С. Еремян развил новую точку зрения об общественном строе древней Армении. На основе всестороннего рассмотрения воп-

росов, касающихся сельского хозяйства, ремесел, торговли, торговых путей и др., он представил цельную картину экономики древней Армении. Еремян раскрыл, в частности, сущность сельской общины, типичной для восточных рабовладельческих формаций и имеющей большой вес в Армении. Он показал, что получившие в Армении широкое распространение дастакерты и агараки были частнособственническими хозяйствами, в которых широко применялся рабский труд. Ученым были подробно рассмотрены вопросы политического устройства Армении, в котором также ярко отразился рабовладельческий характер общества древней Армении. Он пришел к выводу, что общественный строй дофеодальной Армении более близок не к античным, а к древневосточным и эллинистическим рабовладельческим странам, в окружении которых и зачастую в единстве с которыми она развивалась.

Вопрос общественного строя древней Армении разработан в докторской диссертации С. Т. Еремяна «Рабовладельческое общество древней Армении», которая представлена в научном обиходе в виде большой серии опубликованных статей, а также соответствующих разделов в республиканских и союзных сводных изданиях.

Таким образом, впервые в советской историографии академик С. Т. Еремян отошел от укоренившегося мнения о непосредственном переходе армянского общества от первобытнообщинного строя к феодальному и на общем фоне истории древневосточных и эллини-

стических стран научно обосновал рабовладельческий характер древнеармянского общества.

Естественным продолжением этой принципиально важной проблемы стали исследования С. Т. Еремяна, посвященные вопросу зарождения феодализма в Армении. Вопрос формирования феодальных отношений был постоянным предметом споров и разногласий в армянской историографии. Академик С. Т. Еремян связал зарождение феодализма с кризисом рабовладельческого строя и показал, что в III—IV вв. нашей эры феодальный способ производства одержал в Армении окончательную победу. Он подчеркнул также то обстоятельство, что в недрах армянского рабовладельческого общества, начиная с первых веков нашей эры, исподволь зрели и развивались элементы феодализма. Говоря о процессе феодализации страны, ученый одновременно отметил, что в окраинных областях Армении, где рабовладение было слабо выражено, первобытнообщинный строй и патриархальные формы эксплуатации заменились раннефеодальными формами. «Развитие общества,— пишет С. Т. Еремян,— протекало здесь прямым путем—от первобытнообщинного строя к феодализму».

Продолжением этих исследований являются труды С. Т. Еремяна, посвященные установлению научной периодизации истории армянского народа и проблема генезиса феодализма на почве Армении.

Периодизация истории эпохи феодализма является одной из стержневых проблем истории средневековой Армении. Армянская буржуазная историография рас-

сматривала феодализм не как определенный способ производства, а как форму политico-правовой организации. Подходя к проблеме со столь неверных методологических позиций, она, естественно, не могла дать ей научного объяснения.

В 1940-х годах в советской армянской историографии началась активная дискуссия по вопросу периодизации истории эпохи феодализма в Армении.

В 1951 г. в центральном журнале «Вопросы истории» С. Т. Еремян опубликовал статью, носящую скромное название «Опыт периодизации истории Армении эпохи феодализма». В сжатой и обобщенной форме в ней подводился итог результатам многолетней работы автора. В этой статье представляющей серьезный научный интерес, рассматривается процесс зарождения и развития феодальной системы в Армении, начиная с III—IV веков до XIX столетия. Согласно периодизации, разработанной С. Т. Еремяном, феодальное общество в Армении также прошло три основных исторических периода—период раннего феодализма, охватывающий IV—IX вв., период развитого феодализма—IX—XIV вв. и период упадка или, выражаясь словами автора, период разложения феодализма—XIV—XVIII вв. Эти три основных периода в истории развития феодализма в средневековой Армении С. Т. Еремян делит на отдельные фазы и показывает их характерные стороны и особенности. Так, например, процесс упадка феодализма в Армении он обуславливает деградацией, вызванной чужеземным владычеством и выразившейся в замене

развитых феодальных отношений кочевыми полупатриархальными феодальными отношениями. Разработанная С. Т. Еремяном периодизация истории феодализма была принята и нашла признание. Более того, дальнейшие исследования отдельных вопросов социально-экономической и политической истории средневековой Армении не только не потребовали пересмотра этой периодизации, но, наоборот, только подтвердили ее. Это обстоятельство свидетельствует о глубоком и всестороннем понимании С. Т. Еремяном всей истории эпохи феодализма и о его умении раскрывать внутренние закономерности исторического развития.

В научной деятельности академика С. Т. Еремяна значительное место занимает изучение политической истории древней и средневековой Армении. В ходе общего изложения истории Армении и Закавказья, как и в отдельных статьях, были поставлены и разрешены многочисленные вопросы политической истории. Они явились основой и открыли возможность для новых исследований, стимулировали историографическую мысль.

